

ՄՅՈՒՆՅԱՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ,
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ

(Գլածորի համալսարանի հիմնադրման 700-ամյակի առթիվ)

Ա. Գ. ԱՐՐԱՀԱՄՅԱՆ

Գլածորի ուսումնականների հասարակական, քաղաքական և մանկավարժական հայացքների մասին արժեքավոր տեղեկություններ են հասել մեզ հիմնականում Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց»-ից, «Ձմեռան» ու «Ամառան» քարոզգրքերից և մեկնողական բնույթի մյուս աշխատություններից: Պարզված է, որ Տաթևացու աշխատություններում արժարժված ասույթներն անձնական բնույթ չունեն, այլ ամփոփում են ինչպես Գլածորի, այնպես էլ Տաթևի ուսումնականների որդեգրած հայացքները: Այդ, ի դեպ, նշել է նաև Տաթևացին իր գրքերի հիշատակարաններում. «Ժողովեցի ծաղկաբաղ մեկնութիւնս», «Բացայայտեցի զբանս հարցմանց ի լուսաւոր վարդապետաց» (այսինքն ուսուցիչների), «Հաւաքեցի ի սրբոյ արանց զճշմարիտն և զուղիղն», «Հաւաքեցի ձեռամբ իմով զգիրքս քարոզողաց» և այլն: Գլածորի և Տաթևի համալսարանականները, ինչպես ճիշտ նկատել է Ս. Արևշատյանը, «կապված էին իրար հետ ինչպես հաղորդման թելերով, այնպես և գաղափարական ընդհանրություններով»¹: Անվիճելի է, որ Գրիգոր Տաթևացու ներկայացրած հասարակական, քաղաքական և մանկավարժական բնույթի ասույթները հավասար չափով վերարկրում են ինչպես Տաթևի, այնպես և Գլածորի համալսարաններին, ուստի նպաստակահարմար համարեցինք դրանք ներկայացնել մի ամբողջության մեջ:

Սյունյաց համալսարանականները հասարակական և քաղաքական բնույթի բազմաթիվ հարցեր են քննարկել, որոնց բոլորի մասին խոսելը մեր նպատակից դուրս է, կանգ կառնենք միայն նրանց վրա, որոնք, մեր կարծիքով, կարևոր են²:

Սյունյաց ուսումնականները կենդանական աշխարհում առաջնակարգ դերը հատկացնում են մարդուն և գտնում, որ «նա է իշխան և տէր ամենայն կենդանեաց»: Կենդանիները, որպես անբան ծառաներ, գլխիկոր են, իսկ մարդը որպես իշխան՝ ուղղաձիգ է: Իսկ թե մարդու ուղղաձիգ լինելն ինչ նը-

¹ Ս. Արևշատյան, Նոմինալիզմի արտացոլումն ու զարգացումը միջնադարյան Հայաստանում («Թանրեր Մատենադարանի» № 6, էջ 80):

² Տաթևացու փիլիսոփայական հայացքները քննարկված են Ս. Արևշատյանի «Философские взгляды Григора Татеваци», իսկ սոցիալ-տնտեսական հայացքները՝ Ն. Թովմասյանի «Գրիգոր Տաթևացու սոցիալ-տնտեսական հայացքները» ուսումնասիրությունների մեջ:

շանակութիւնն է ունեցել մյուս կենդանիներից նրա զատվելու համար՝ հետևյալ ձևով է պատճառարանված. եթե մարդու երկու ձեռքերը դեպի գետին թեքված լինեին, այդ դեպքում նա երկար լեզու պետք է ունենար և հաստ շրթունքներ, «գի ժողովեսցէ զկերակուր», բայց այդ դեպքում մարդը չէր կարող գործել և խոսել»³:

Հասարակութիւնը, ըստ Սյունյաց ուսումնականների տեսութեան, նման է մարդու օրգանիզմի, որի ամեն մի անդամն իր պարտականութիւնն ունի կատարելու. ոտքերը քայլելու համար են, ձեռքերը՝ գործելու, աչքերը՝ տեսնելու, ականջները լսելու, իսկ զլուխը, որն ամենից վերևումն է՝ ողջ մարմինը ղեկավարելու, վասնզի «ի նմանէ իջանեն ամենայն կենդանութիւնք և զօրութիւնք և շարժումն ի բոլոր ամենայն օգուածս մարմնոյն»: Այդ նույն օրինակով էլ կազմված են համարում հասարակութիւնը, ուր գործող տարբեր խավեր կան, որոնց զլիսին կանգնած է միանձնյա իշխանավորը՝ «բարձրացեալ փառօք և մեծութեամբ և զլուխ նստեալ ամենայն մարդկան և կարգաւորէ զնոսա ի ձեռն հնազանդելոց իւրոց՝ մեծամեծաց զփորձունսն»⁴:

Գլաձորի համալսարանում ընդօրինակված ձեռագրերից մեկում հետևյալ ձևով է ներկայացված ավատական հասարակութիւնը. «[Այ]շխարհ՝ է բուրաստան և ցանկ նորին՝ իշխանութիւն: Իշխանութիւն է՝ իշխող, հնազանդեցուցիչ արեւնաց: Արէնքն՝ է ողորիչ և նորին ողորդող՝ թագաւորն: Թագաւորն՝ է հովիւ և նորին ազնական՝ զաւրքն իւր: Զաւրքն՝ զատութիւն են և հաւանեցուցանէ զնոսա գանձն: Գանձն՝ բախտ է և ժողովի յաշխարհի ժողովրդենէ: Ժողովուրդն՝ ծառա է և հաւանացուցանէ զնոսա ճշմարտութիւնն: Ըշմարտութիւնը սովորութիւն է և նովաւ հաստատի աշխարհ»⁵:

Ընդունելով ավատական միապետի անխախտ իրավունքները, սակայն նրանից պահանջվում է, որ նա անձնիշխան չլինի, խորհրդականներ ունենա և նրանց խորհուրդներով առաջնորդվի: Օրինակ է բերվում հին Հռոմեական պետութեան վարչական կազմը. այնտեղ հիսուն խորհրդականներ ամեն օր նիստ են գումարում և կողմնորոշում թագավորին, վերջինս նրանց խորհուրդներով է շարժվում, դրա հետևանքով էլ նրանց թագավորութիւնը հարատևում է⁶:

Ինչպես գյուղը և քաղաքը գործակցում են իրար հետ՝ միմյանց կարիքը հոգալու համար, նույն օրինակով էլ իշխանավորները պետք է գործակցեն իրար հետ, «խորհուրդ կցորդել միմեանց և զուղիղն գտանել»: Գիտակից ղեկավարը պետք է միշտ գտնի «խորհրդակից և օգնական մտացն իւրոց»: Մի մարդը, ասվում է, կարող է միայն իր տունը կառուցել, շատերի տները կառուցել չի կարող, ուստի իշխանավորներին հարկավոր է «ի մի վայր ժողովիլ և զբազում երկրին օգուտն գտանիլ»⁷: Սյունյաց համալսարանականները, փաստորեն, առաջ են քաշել սահմանադրական միապետութեան գաղափարը:

Այդ կապակցութեամբ անդրադառնալով հայ պետականութեան կորուստին՝ Սյունյաց համալսարանականները մերժել են հայ իրականութեան մեջ

³ Գիրք հարցմանց երիցս երանեալ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Տաթևացոյ, Կ. Պոլիս, 1829, էջ 233:

⁴ Գիրք Բարզուպեան, որ կոչի ամառան հատոր, արաբեալ սրբոյ Յօրն մերոյ Գրիգոր Տաթևացոյն եօթնալոյս վարդապետին, Կ. Պոլիս, 1741, էջ 422—423:

⁵ ՄԱՄ, ձեռ. № 1746, Բ. 196ա:

⁶ «Ամառան» հատոր, էջ 424:

⁷ Նույն տեղում, էջ 424:

դարեր շարունակ քաղաքացիութիւն ստացած «Վասն ծովացեալ մեղոց» կարծիքը, որ իբրև թե հայ պետականութեան կորուստը հետեանք է հայ ժողովրդի գործած ծովացած մեղքերի, և այն բացատրել հայ իշխանավորների միանձնյա, անխորհուրդ ղեկավարութեամբ. «Եւ մերս առաջնորդք և իշխանք հոգևոր կամ մարմնաւոր,— ասվում է «Ամառան» քարոզում,— որք իշխանութեամբ կատարէին զգործսն, առանց խորհրդակցի, վասն որոյ բարձեալ է իշխանութիւնն և աւերեալ է երկիրն և տարագրեալ են ժողովուրդք մեր ի վերայ երկրի և ցրեալ յամենայն ազգս»⁸:

Սլունյաց ուսումնականները գտնում են, որ պետութիւնը խելոք կառավարելու համար պետք է հենվել օրենքի վրա, արդարութեան հիմքը օրենքը պիտի լինի: Ըստ որում, օրենքները նրանք բաժանում են երկու տեսակի՝ հարկավոր (հոգևոր) և հնարավոր (աշխարհիկ): Հարկավորն՝ «անփոփոխելի է, ոչ յաւելուլ կարէ և ոչ նուազել», իսկ հնարավորը ենթակա է փոփոխութեան ըստ ժամանակի պահանջի, այն «մեր իմաստութեամբ ընտրեմք և փոփոխեմք»⁹: Դժբախտաբար, նրանք շրջանցում են, շեն պատասխանում այն կարևոր հարցին, թե աշխարհիկ օրենքները փոփոխվելու դեպքում փոխվո՞ւմ է արդյոք պետութեան վարչական կազմը, թե՞ ոչ:

Իշխանավորներից պահանջվում է արդարութեամբ ղեկավարել երկիրը: Երբ իշխանավորն արդար դատաստանով է կառավարում երկիրը, իշխանութիւնը հզորանում է և խաղաղութիւն հաստատվում, իսկ երբ անիրավութեամբ է կառավարում՝ խռովութիւն է առաջանում և «երկիրն խռովի և վեհերի»: Պետութեան հաստատութեան համար երկու պայման է հարկավոր՝ երկիրը կառավարել խորհրդակցութեամբ և «արդար դատաստանաւ»: Այն դեպքում, երբ աշխարհիկ ու հոգևոր իշխանավորներն են սխալվում, սխալվում են և նրանց ենթակաները և անկարգանում: Այդ երեւոյթը նման է գլխացավի. երբ մարդու գլուխն է ցավում, ցավում է և ողջ մարմինը: Անիշխան երկիրը ոտնակոխ է լինում օտարերկրյա թշնամուց, իսկ ժողովուրդը ցրվում է ամեն տեսակի հողմից, գազանակուր լինում և կորչում: Օրինակ է բերվում հայ ժողովուրդը. «... որպէս ի ժամանակս յայս տեսանէմք յազգս մեր անիշխան և անառաջնորդ, իբրև զոչխար առանց հովուի՝ գազանակուր լինեն և կորչեն»¹⁰:

Իշխանավորը պարտավոր է ժողովրդին ղեկավարել ո՛չ թե բռնութեամբ, այլ իմաստութեամբ, խորհուրդ տալով: Օրինակ է բերվում խելոք զորավարը, որը զինվորներին մարտի է տանում ոչ թե բռնութեամբ, այլ քաղցրութեամբ, քաջալերում է նրանց՝ չվախենալ հակառակորդ թշնամուց, հիշել իրենց քաջ նախնիների սիրագործութիւնները, նրանց տարած հաղթանակները և նրանց ժառանգած բարի անունը: Կովող զինվորների համար զորավարի քաջալերիչ խոսքը նման է ցողի, որն իջնում է կանաչի վրա և «զվարթացուցանէ զնա»¹¹:

Կարևոր նշանակութիւն է տրվում դատավարութեանը: Գլաձորի սան Կարապետ գրիչը 1317 թ. գրած ձեռագրում, որը ծաղկանկարել է Թորոս Տարոնացին, հետևյալ պահանջներն է առաջադրել դատավորին: «Վեց իրք են, որ պիտոյ են դատաւորաց: Առաջ, որ գիտենայ հասարակաց օրէնք: Երկրորդ, որ

⁸ Նույն տեղում, էջ 424:

⁹ ՄԱՄ, ձեռ. № 1264, Թ. 373ա:

¹⁰ «Ամառան» հատոր, էջ 423:

¹¹ Նույն տեղում, էջ 425:

գիտենայ զառանձին օրէնքն: Երրորդ, որ գիտենայ զգրոց օրէնք: Չորրորդ, որ լինի անկարիք: Եւ այս բաժանի յերկուս. կամ որ լինի անկին և անորդիք և կամ թէ կին և որդիք ունի, պարտ է ունենա ապրանք, զի անկարաւտ լիցի ընչից: Վեցերորդն, որ լինի իմաստուն, զի մի հանդիպեսցի այլոք իմաստուն և զիր դատաստանն ստէ: Ոմանք իմաստունք յաւելին երիս այլ իրս. մին որ լինի աղեկ հասկնաւ, որ կարէ հասկանալ գերկուց կողմանցն: Եւ մին այլ որ ունենայ յիշողական ամուր, որ ի գիտուն նա զառաջնոյն, ինչ որ վերջինն ասէ: Եւ մի այլ որ լինի լեզու սպրկիկ, որ կարէ սպրկիկ խաւսել զբանն»¹²:

Հասարակութեան մեջ գոյութիւնն ունեցող խավերից դրական դերը հատկացվում է գյուղացիութեանը, առանց որի հասարակութիւնը գոյութիւնն ունենալ չի կարող, քանի որ կերակրի, ըմպելիքի և զգեստի գլխավոր մատակարարողը գյուղացին է. «Ի նորա հողոյն, յարտէն յայգոյն, ի կալէ և ի հօրէ, ի տանէ և յամենայն տեղաց մարդիկ և կենդանիք և աղքատք վայելեն»: Առանց նրա «ոչ շինութիւն լինի և ոչ թագաւորութիւն հաստատի»¹³: Եղած բոլոր զբաղմունքներից ամենից արդյունավետը երկրագործութիւնն է, իսկ բոլոր մարդկանցից ամենից բարին և աշխատասերը երկրագործն է, որն իր ճակատի քրտինքով է ուտում իր հացը, նա է, որ «ի յերկրէ, և ի պտղոց, և ի կենդանեաց, յանասնոց և յայլոցն շահի»¹⁴: Գյուղացին աշխատող է, իսկ աշխատող մարդը նման է պտղատու ծառի, իսկ շաշխատողը՝ անպտուղ թզնու: Զրիակերութեամբ զայլոց հաց ուտելն՝ ցաւոց և վշտից հաց է» — դատապարտում են անաշխատ մարդկանց: Երբ մարդն անգործ է, ուտելու հաց չի ունենում, միտքը դնում է գոլութեան, հափշտակութեան վրա, որպեսզի ապրել կարողանա: Մուլերին խորհուրդ է տրվում օրինակ վերցնել մրջյունից կամ մեղվից: Ի դեպ, պարապ մարդուն ճիշտ այդ կերպ է բնորոշել հետագայում ֆրանսիական մանկավարժութեան նշանավոր գործիչ Ժան Ժակ Ռուսոն (1712—1778), գրելով՝ «Հարուստ, թե աղքատ, հզոր թե թույլ, ամեն մի պարապ քաղաքացի խաբեբա է»¹⁵:

Երկրագործը պատվական է նաև նբանով, որ մեզ տալիս է ոչ միայն կերակուր, այլև ըմպելիք և զգեստ, երկրագործն է հոգում վաճառականների, մեծամեծների և հասարակութեան բոլոր մարդկանց կարիքները:

Սողոմոնի «Առակաց գրքի» մեկնութեան մեջ Տաթևացին հետևյալ ձևով է ներկայացնում գեղջկուհու առօրյան. «Նա ոչ միայն ի ցերեկի գործէ, այլև ի գիշերի. ինչպես ասէ, ոչ շիջանի ճրագներ զամենայն գիշերս. այլ անձանձրույթ տալ ի լոյս... զի և զարանց գործ կատարէ արիութեամբ, այսինքն՝ ի շինել և ի տնկել և ի գործել զերկիր... զի պատրաստէ հունձս իւր և առն իւրում և ամենայն ընտանեացն և ոչ կարօտին յարտաքուստ գնելոյ»¹⁶:

Գյուղացին իր ապրելակերպով ընդհանրապես շատ համեստ է, միայն չորս կարիք ունի՝ «այսինքն՝ զի ունիցի կերակուր, և հանդերձ, և յարկ հանգրստեան և պատրաստութիւն ամուսնութեան. և այսու շափաւորին»: Այլ է իշխանավորի ապրելակերպը. մեծատունների, թագավորների և իշխանների չի բավարարում շափավոր ապրելակերպը, նրանք՝ ձգտում են շափից

¹² ՄԱՄ, ձեռ. № 6897, ք. 420ա:

¹³ «Ամառան» հատոր, էջ 109—110:

¹⁴ Նույն տեղում, էջ 132:

¹⁵ Ն. Կոստանտինով և այլք, Մանկավարժութեան պատմութիւն, Եր., 1972, էջ 70:

¹⁶ ՄԱՄ, ձեռ. № 1264, ք. 367ա: (ՄՄՄ. Ն. Քալմասյան, էջ 57—58):

ավելին. Եթե ունեն մեծություն, ձգտում են ավելի մեծանալ, գյուղի իշխանը ցանկանում է դառնալ քաղաքի և երկրի իշխան, եթե ունեն շքեղ զգեստ, «Կարօտին պայծառազգեստ և պաճուճազարդ լինել»։ Այդպես են նրանք նույնպես կերակրի, ըմպելիքի, ամուսնության և մնացած բոլոր պահանջմունքներում¹⁷։

Հասարակության մեջ մյուս խավը, որի գործունեությունը գնահատվում է, արհեստավորությունն է՝ հյուանը, դարբինը, որմնադիրը, ոստանիկը և մյուսները։ Նշվում է, որ արհեստավորների գործունեության մեջ բարին շատ ավելի է։ Արհեստավորները, ըստ Ստեփանոս Օրբելյանի, ստեղծագործող են և արարչակից, որովհետև նրանք «գոյացուցանեն յանպատշաճ իրաց պատշաճաւոր և շահավոր և պիտանի»։ Օրինակ է բերվում հյուանը, որը անտառի փայտից պատրաստում է սեղան և աթոռ, դերձակը և կոշկակարը, որոնք կարում են կոշիկ և զգեստ, դարբինը, որը քարից երկաթ է ստանում, իսկ երկաթից սուր պատրաստում և այլն¹⁸։ Արհեստավորի նկատվող թերությունը միայն այն է համարվում, որ նա երբեմն «զգործն վատ առնէ կամ նիթեն գողանայ»¹⁹։

Մեզ հայտնի է, թե հետագայում հայ մեծ մանկավարժ Ղ. Աղայանը Լրեսիայի կրթության ու դաստիարակության գործում որքան մեծ կարևորություն էր տալիս արհեստներին ու արհեստագործությանը։

Բացասական կարծիք է հայտնվում վաճառականների մասին, որովհետև նրանց գործունեությունն ամբողջապես կապված է առևտրի հետ, իսկ առևտրի ժամանակ խաբեբայությունը սովորական է. «Իսկ որ առաւել է շար բան զբարին՝ որպէս վաճառանացն. զի վաճառն բազում սուտ լինի և երդումն և զբրկում՝ ի ճարտարութենէ և յազահութենէ»։ Առևտրականների մեջ կան և այնպիսիները, որոնք ժողովրդին շահագործում են այնպիսի վատթար միջոցներով, ինչպիսիք են «վաշխիւն ոսկւոյ և արծաթոյ և տոկոսիքն»²⁰։ Այդպիսիներն այնքան ազահ են, որ որքան հարստանում են, այնքան շատ են ուզում հարստանալ։ Այդ արատը պատկերավոր ձևակերպված է «Բանք իմաստասիրանք»-ում. «Մեծատունք ջրգողաց նման են, որ ջրով ուռացեալ, միշտ ծարաւի են»²¹։ Այդ նույնը, մի այլ տարբերակով՝ «Կեանք արծաթասիրաց նման է սեղանոյ սզաւորաց, զի թէպէտ զամենայն ինչ ունի, այլ ոչ նա ուրախ առն զնա»²²։

Հասարակության մյուս խավերը, որոնց մասին խոսվում է, աշխարհիկ և հոգևոր իշխանավորներն են։ Գլաձորի և Տաթևի ուսումնականները, հասկանալի է, չէին կարող բացասաբար արտահայտվել նրանց մասին, չէին կարող շնորհդրել աշխատավորությանը՝ հնազանդվել «տէրանց ձեռոց»։ Սակայն նրանք, այնուամենայնիվ, չեն վարանում քննադատելու այն իշխանավորներին, որոնք անարդարություն են գործում։

Կան իշխաններ, ասվում է, որոնք գողակից են գողերին, խարդախներ, որոնք ըրնդ արծաթն պղինձ խառնեն և ընդ գինին՝ ջուր և այլք զչափ և զկշիռն

¹⁷ Նույն տեղում, թ. 392բ—393ա։

¹⁸ Ստեփանոս Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 7։

¹⁹ «Ամառան» հատոր, էջ 112։

²⁰ Նույն տեղում, էջ 212։

²¹ ՄԱՄ, ձեռ. № 2189, թ. 371ա։

²² Նույն տեղում, թ. 371ա։

թիւրին», իսկ իշխանները նրանց պատժելու փոխարեն «առնուն ի նոցանէ կաշառս» և կցորդ դառնում գողերին²³:

Որոշ իշխաններ արհամարհում են աղքատներին, աշխատում հնարավոր միջոցներով հեռու պահել իրենցից: Այդ նպատակով նրանք իրենց տան առջև դռնապահներ են կարգում, բերդերի պարիսպների մոտ պահապաններ դնում: Այսպիսիք մոռանում են, որ վաղը «յորժամ մեռանին» աղաչելու են աղքատներին, զի հատցեն (այսինքն՝ փորեն) գերեզման նոցա»²⁴: Նշվում է նաև, որ այդ հարուստները հաճախ «բոնութեամբ և յայտնապէս զրկեն և յափշտակեն զինչս (գույքը) աղքատաց, և որպէս ձկունք մեծամեծք՝ զփոքրունս կլանեն»: Մեծահարուստներից ոմանք շինականից խլում են նրա հողը, այգին և տունը: Նրանք նույնիսկ «զվարձս և վարձկանց զրկեն»²⁵:

Կլաճորի և Տաթևի համալսարանների կողմից իշխանավորներին ուղղված ամենից ծանր մեղադրանքը համարվում են կենտրոնախույս ձգտումները՝ նրանցից ամեն մեկը դարանամուտ հետևում է մյուսին, նրանք «զմիմեանց փառս զրկեն և իշխանութիւն յափշտակեն»: Հետևանքը լինում է այն, որ թուլանում է երկրի հզորութիւնը և դուռ բացվում դրսի թշնամու համար: Պետականութունը կորցնելուց հետո, երբ երկիրը մնում է առանց իշխանի, իսկ ժողովուրդը՝ առանց առաջնորդի, բնակչութիւնը ցրիվ է գալիս թեթև քամուց: Այստեղ ևս բերվում է հայոց օրինակը. «... յայս տեսանեմք յաղագս մեր՝ անիշխան և անառաջնորդ, ոշխար՝ առանց հովուի, գազանակուր լինին և կորչեն»: Որպես միասնութիւնը պառակտող անձնավորութիւն, մատնացույց է արվում Վասակը. «Այսպէս, ուրացողն Վասակ՝ ապստամբեալ ի զօրավարէն Հայոց ի մեծէն Վարդանայ սրբոյ»:

Մարդիկ իրենց առօրյա աշխատանքի ընթացքում կարիք ունեն օգնութեան: Դրա համար նրանք իրար պետք է օգնութեան ձեռք մեկնեն, որի միջոցով կարելի է բավարարել մարդկանց կարիքները: Այդ միջոցով, ասվում է, կարող ենք գտնել «զկարօտութիւն մեր, սիրեսցուք զմիմեանս և լինի եղբայրութիւն»²⁶: Մենք մեկից կարող ենք սովորել, մյուսին՝ սովորեցնել, իսկ դրանից բազում օգուտներ կլինեն:

Համալսարանի ուսումնականները քննադատել են իրենց ժամանակ ավատական հասարակութեան մեջ գոյութիւն ունեցող մի շարք բացասական երևույթներ: Դրանցից է, օրինակ, ավազակութիւնը: Ավազակները ճանապարհին նստելով՝ «թալանեն և կողոպտեն զմարդիկ»²⁷: Դատապարտել են գողերին, որոնք «ծածուկ զինչսն (այսինքն՝ գույքը) մարդոյն տանըն ի տանէն»²⁸: Նրանք չեն զլանում քննադատել նաև այն գողութիւնը, որոնք կատարում են հոգևորականները. կան շար քահանաներ, — գրում է Տաթևացին, — «զոր ինչ բերեն ժողովուրդքն նուէրս ի զարդարանս եկեղեցոյ՝ զողացեալ առնեն զարդ ուստերաց և դստերաց իւրեանց»²⁹:

Սանր հանցանք է համարվում հատկապես անբարոյականութիւնը. մար-

²³ ՄԱՄ, ձեռ. № 2460, ք. 225ա: (Հմմտ. Ն. Թովմասյան, էջ 53):

²⁴ «Ամառան» հատոր, էջ 141—144:

²⁵ «Զմեռան» հատոր, էջ 194:

²⁶ «Ամառան» հատոր, էջ 254:

²⁷ Նույն տեղում, էջ 141:

²⁸ Նույն տեղում, էջ 141—142:

²⁹ «Զմեռան» հատոր, էջ 285:

դը շնության հտեից ընկած՝ թողնում է հարազատ կնոջը և «զկին ընկերին յափշտակէ», որով իր և ընկերոջ «հալալ անկողինը պղծէ»³⁰,

Մեծագույն հանցանք է համարվում բամբասանքը. բամբասողը համեմատվում է թունավոր օձի հետ, բայց նա ավելի վատթար է համարվում, քան օձը, «վասնզի զօձն թովելով» կարելի է ընտելացնել, իսկ բամբասողին՝ «զայսպիսիս՝ ոչ»: Ընկերոջը բամբասելն ավելի խոցելի է համարվում, քան նետով հասցրած վերքը:

Ծանր է դատապարտվում զրպարտությունը, շարախոսությունը. շարախոսները համեմատվում են կծող շների հետ. «... շարախոս մարդիկ՝ իբրև շուն խածանօղբ են», — ասվում է «Ամառան» հատորում: «Երեք ազգ շուն կայ, մէկ լակոտ», ապա՝ «մեծ շուն» և երրորդ՝ «կատաղած շուն»: Լակոտ շունը «միայն միս ուտէ և արիւն լիզու», մեծ շունը՝ «զմիս և զոսկորն», իսկ կատաղած շունը «շրջի երերուն և զորս գտանէ խածանէ և կատաղացուցանէ զամենեսեան զինքն»: Փոքր շարախոսները՝ լակոտ շների նման, փոքր կարգի շարախոսություններ են անում: Մեծ շարախոսները մեծ շան նման են, «որ են սուտ վարդապետք, և եպիսկոպոսք և երիցուք, որ փոքունց և մեծամեծաց ասեն շար», շարախոսում են ինչպես փոքրերին, այնպես և մեծերին: Իսկ կատաղածին նմանվողները տեղից տեղ են շրջում, զրպարտություններ անում և «շարախոսութիւն յորդորեն»³¹:

Նշկելի են համարվում շողոքորթությունն ու կեղծանքը. շողոքորթը «քծնի որպէս շուն, ողոթէ, շողոքորթէ և աղաչէ»:

Դատապարտվում է նաև հարբեցողությունը: Ուշագրավ է այն բնութագիրը, որը տրվում է հարբեցողությանը: Գինին մարդկանց այլալլում է և շարժունակ դարձնում: Այլալլման ժամանակ հետևյալն է տեղի ունենում. մարդ, երբ խմում է, գինու ծուխը մտնում է խելքը, եթե ուրախ է, փոխվում է տխրության և լացի, թե տրտում է, փոխում է ուրախության, թե գիտուն է, դառնում է տգետ, թե տգետ է, դառնում է իմաստուն, զորեղը փոխվում է անզորության: Այս գինու առաջին հատկությունն է: Երկրորդի ժամանակ գինին հրահրում է հարբեցողին բարկության, ցանկության, խաղի, ծափի, կաքավելուն և այլն³²:

Ի դեպ, հարբեցողության բացասական դերը ցույց տալու նպատակով «Բանք իմաստասիրականում» հետևյալ խրատական ասացվածքն է արձանագրված. «Դիողանսը շքեղ խնջույքի ժամանակ գինին թափում էր գետնին: Երբ մեղադրեցին, նա ասաց. «Եթե խմեմ գինին, ինքն էլ է թափելու, ինձ էլ վայր ձգելու, ուստի լավ է, որ ինքը կորչի»³³:

Գլածորի և Տաթևի ուսումնականները բացասական գույներով են ներկայացրել քաղաքային կյանքը: Նրանք մատնացույց են արել քաղաքում տեղի ունեցող ինը տեսակի արատավոր երևույթներ. «Առաջինն՝ դատաւորք սուտք ի յատենի: Երկրորդ՝ քահանայք սուտ փ տաճարի: Երրորդ՝ գեղեցիկ բողբ ի պոռնկանոցի: Չորրորդ՝ խաբեբայ վաճառականք ի փողոցի: Հինգերորդ՝ դրամախաղացք (դերասաններ) ի հրապարակի: Վեցերորդ՝ փաղաքջօքն և երկպառակքն ի յապարանս արքունի: Եօթներորդ՝ մատնօղբն ի ձեռն գրի:

³⁰ «Ամառան» հատոր, էջ 141—142:

³¹ Նույն տեղում, էջ 231:

³² Նույն տեղում, էջ 267:

³³ ՄԱՄ, ձեռ. № 4166, Թ. 262բ:

Ութերորդ՝ բամբասօղբ ի ծածուկ: Իններորդ՝ արբեալքն, որ զեղխեալ լինին գինով»³⁴:

Գլաձորի և Տաթևի ուսումնականների աշխատություններում մանկավարժութեան և մանկավարժի անձնավորութեան մասին կան ուշագրավ տեղեկություններ: Առհասարակ մանկավարժութեան և մատաղ սերնդի դաստիարակութեան խնդիրները Սյունյաց համալսարանականների ուշագրութեան կենտրոնում են գտնվել: Անհրաժեշտ ենք համարում բերել նրանց ասույթներից մի քանիսը:

Գլաձորի ուսումնականները մանկավարժից առաջին հերթին պահանջում են, որ նա մաքուր վարք ունենա. «Վարդապետ կոչեմ ոչ զայն որ բազում բանս ի բերան առնում, այլ որ մաքուր վարս ստացեալ ունի», — հույն փիլիսոփա Պլատոնի խոսքը հիմք ընդունելով, գրում է Եսայի Նչեցին³⁵:

Սյուս պահանջը ուսուցիչներից այն է, որ նրանք կատարելապես տիրապետեն իրենց դասավանդված առարկաները: Ուսուցիչը նախ ինքը պետք է ուսած լինի, որ կարողանա ուրիշին ուսուցանել: մեկը եթե տգետ է, ուրիշին սովորեցնել չի կարող³⁶:

Երեխան, ըստ այդ ուսումնականների տեսութեան, «անգիր պնակիտ է կամ լուացած մագաղաթ», որի վրա ինչ որ գրեն՝ «զայն առնու»: Նույնպես «մարդոյն զինչ որ ուսուցանեն՝ թէ շար, թէ բարի, զայն ուսանի»: Օրինակ է բերվում արհեստը. փոքր երեխային «չինչ արուեստ տան զիրաքանչիւրսն զնույն ուսանի՝ մինն զհիւսն, դարբին, ջուլհակ և այլն»: Բերում է նաև լեզվի օրինակը. «Յինչ լեզու որ լինի տղայն՝ զայն ուսանի՝ հայի կամ վրացոյն»: Վերջում եզրակացնում է «Միտք տղային զինչ խրատին, զայն ուսանի»³⁷:

Երեխան առաքինություններով չի ծնվում, նրա վարքը ձևավորվում է իր ապրած ժամանակաշրջանում և միջավայրում, ուստի դաստիարակը պիտի հաշվի առնի տվյալ միջավայրի ազդեցությունը և ըստ այնմ կազմակերպի իր աշխատանքները. մի կողմից նա պետք է կովի վատ ազդեցությունների դեմ, իսկ մյուս կողմից երեխայի մեջ պատվաստի լավ ու գեղեցիկ հատկություններ:

Սյունյաց համալսարանականները ժառանգականության, միջավայրի և դաստիարակության հարցերը քննութեան առնելիս, առաջնությունը տալիս են դաստիարակությանը և միջավայրին, մի գաղափար, որը XVII դարի վերջերին միայն առաջ քաշվեց փիլիսոփա Ջոն Լոկի (1632—1704) կողմից:

Մանկավարժներից պահանջվում է, որ երեխաներին դաստիարակեն համբերատար աշխատանքով, որպեսզի երեխան կարողանա ներընդունել լավն ու բարին: Օրինակ է բերվում երկրագործի աշխատանքը. նա նախ գետինը հերկում է, փափկացնում, ապա՝ սերմանում: Նույն ձևով պետք է վարվի նաև մանկավարժը. նա պիտի հղկի, փափկացնի, հստակ դարձնի երեխայի միտքը, որպեսզի «զսերմն ուսման բուսուցէ յինքնեան և պտղաբերեսցէ, ապա թէ ոչ՝ ի կորդացեալ երկիր սերմն ոչ բուսնի»: Մանուկը «ի ձեռն խրատողի և առաջնորդի ժամանի կատարեալ բարութիւնն»³⁸:

³⁴ «Ամառան» հատոր, էջ 588 (Հմմտ. Ն. Քովմասյան, էջ 54—55):

³⁵ ՄԱՄ, ձեռ. № 1460, էջ 128:

³⁶ Գ. Հովսեփյան, Խաղբակյանք, հ. II, էջ 276:

³⁷ «Ամառան» հատոր, էջ 454:

³⁸ Նույն տեղում, էջ 455:

Մատենադարանի № 573 ձեռագրում, որը հավանաբար գրվել է Տաթև-վում, ուսուցման համար շորս անհրաժեշտ պայման է նշվում: Առաջինը. ուսուցչի կամեցողությունը՝ «լինի ուսուցանող»՝ առանց ազահուսթյան և փառասիրության: Երկրորդ՝ ուսանողները չերմ ցանկություն ունենան սովորելու: Երրորդ՝ խաղաղություն լինի երկրում: Եվ չորրորդ՝ լինի մեկուսացած և անսպասելի միջավայր:

Ուսման բնագավառում առաջին քայլեր անող երեխան ունենում է բնավորության որոշ թերություններ: Հմուտ մանկավարժի խնդիրն է՝ վերացնել այդ թերությունները: Գյուղացիները պարտեզում, արտում քաղհան են անում, որ բույսը զարգանա. նույն ձևով երեխայի հետ պետք է վարվի մանկավարժը: Նա պիտի աշխատի վերացնել երեխայի բնավորության թերի կողմերը՝ «խրատով մի մի ի բաց խել, զի ուսմանն բոյսք ի յինքն աճեսցին»: Բերվում է նաև հյուսնի օրինակը. աթոռ պատրաստելու համար նա նախ տաշում, հեռացնում է փայտի ավելորդ մասերը, ապա հղկված մասերն իրար միացնելով պատրաստում է աթոռը³⁹:

Մանուկ երեխան շորս պակասություն է ունենում: Նախ՝ «անմիտ է և պակաս խելօք»: Երկրորդ՝ միտքը անհաստատ է և դյուրափոփոխ, շի կարող ընտրել հաստատը՝ «որպէս գալիս ծովու միշտ խոռվութեան կայ և տատանի և տարբերի»: Երրորդ՝ մահվան օրը նրա համար շատ հեռու է երևում և նա մտածում է, թե բազում ժամանակ կա բարիք գործելու: Չորրորդ՝ զգայությունները շատ սուր են, սուր աչքով է տեսնում, սուր ականջով է լսում ու ցանկանում և սիրտը ցանկությամբ է բորբոքվում⁴⁰: Այլ բնավորություն ունի երիտասարդը: Նրա զգայարաններն առողջ են, ուժեղ և հաստատուն: Նա կերակուրը ախորժակով է ճաշակում, զեղեցիկ հագնվելու ցանկություն ունի, պատերազմում քաջ է, իսկ կյանքում՝ միշտ կենսուրախ: Որպես տիպար նրմուշ բերվում է Ավարայրի հերոսներին. «Սրբոյ նահատակացն և զօրավարացն Հայոց՝ մեծին Վարդանայ և ընկերաց նորա, որք ոչ միայն երիտասարդք էին և արի մարմնով, այլև՝ հոգով»⁴¹:

Հասակի տարբերությունը նկատի ունենալով, պահանջվում է տարբեր տարիքի երեխաների և երիտասարդների նկատմամբ ցուցաբերել տարբեր վերաբերմունք. «Ըզտղայն պարտ է երկիւղի խրատել, երիտասարդն քաղցրութեամբ, իսկ զկատարեալն՝ իմաստութեամբ»⁴²:

Սյունյաց ուսումնականները մարդու տարիքային զարգացման ստադիան բաժանում են վեց շրջանի՝ երեխայության, մանկության, պատանեկության, երիտասարդության, ծերության և զառամացյալության⁴³: Տարիքային նման բաժանվածությունը մանկավարժության պատմության մեջ առաջին անգամ եվրոպայում կատարվել է XVII դարում:

Մանկավարժից պահանջվում է հատուկ ուշադրություն դարձնել երեխաների մոտ նկատվող երեք պակասությունների վրա: Դրանցից առաջինը դատարկախոսությունն է. «Պարտ է զլեզու տղային պահել, զի մի շատ խօսես»

³⁹ Նույն տեղում, էջ 455:

⁴⁰ «Ձմեռան» հատոր, էջ 203:

⁴¹ «Ձմեռան» հատոր, էջ 197—198:

⁴² «Ամառան» հատոր, էջ 454:

⁴³ Ա. Մովսիսյան, Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության, էջ 157:

ցի, զի մի սուտ սովորեսցի»։ Դրա համար անհրաժեշտ է ամուր լկամ դնել երեխայի բերանին, որ շատախոս չլինի։

Երկրորդ՝ զգուշանալ ձեռնաքաշությունից, քանի որ եթե փոքր հասակում երեխան սկսի մանր գողություններ անել, ապա մեծանալով ավելի մեծ գողություն կանի և ի վերջո կկանգնի կործանման առաջ։

Երրորդ՝ զգուշանալ մարմնի ծուլությունից. չպետք է թույլ տալ, որ երեխան քնկոտ, ծուլ և շատակեր լինի, քանի որ «այնու ի մեծամեծ շարիս ընթացի»⁴⁴։ Նույնը նշված է «Սահմանադրութիւն դաստիարակութեան» մեջ. պետք է երեխային սովորեցնել «զպարկեշտութիւն կերակրոց և ըմպելեաց, զի մի լիցի որկրամուլ և արբեցող և պճնող»⁴⁵։

Մարդն ունի բնական (ժառանգական) և շնորհական (ձեռքբերովի) հատկություններ. ուսուցիչն իր ուշադրությունը պետք է կենտրոնացնի շնորհականի վրա՝ դաստիարակության միջոցով երեխայի մեջ զարգացնի ազնիվ և առաքինի հատկություններ, պայքարելով գոռոզամտության, շարամտության, ոխակալության, դատարկաբանության, ծուլության, քնկոտության, խեղկատակության, քսության և ստորաքաշության դեմ։

Մանկավարժին խորհուրդ է տրվում՝ այն բուրբ, ինչ ատելի, գարշելի և նախատելի են, «ցուցանել յաշս մանկանն և զգուշացնել նրան ի ստախոսութենէ, ի գողութենէ և յայլ այսպիսեաց»⁴⁶։

Դաստիարակը մանկան մոտ պետք է արմատավորի հետևյալ շորս դրական գծերը՝ խոհեմություն, առաքինություն, ողջախոհություն և արդարամբտություն։ Պետք է արգահատել, պարսավել խորամանկությունը, երկչոտությունը, շռայլությունը, ժլատությունը և շարակամությունը։

Դաստիարակը պիտի հաշվի առնի երեխայի տարիքը և մտավոր կարողությունները. անհրաժեշտ է նախ մանկան սրտում հորդորել հաճելի վարք «ըստ շափոյ ընդունակութեան և կարողութեան մանկան», և երբ դաստիարակը նրկատում է, որ մանուկն արդեն վարժված է տարրական ուսումնառության մեջ, «ապա սկսանի գերագույն գիտութիւն»⁴⁷։

Դաստիարակից պահանջվում է, որ նա երեխայի հետ խոսի և նրան ուսուցանի պարզ, հասկանալի լեզվով, իր խոսքը համեմի աշխույժ և զվարճալի օրինակներով, որպեսզի շոր և ցամաք խոսքից երեխաները շձանձրանան։

Խելքը աշակերտն ամեն ջանք պետք է գործադրի յուրացնելու իր ուսուցչի գիտությունը։ Ինչպես նկարիչը դիտում է և նկարում, նույն ձևով էլ աշակերտը պարտավոր է իր ուսուցչի խոսքը և դորժը «ուսանել և համանմանիլ նմա»։ Սակայն այդ բավական չէ. նա «ո՛չ միայն զոր տեսանէ և լսէ զայն ուսանի, այլ և զներքին շարժումն սրտին և զորպիսութիւն կամացն պարտ է գտանել» և հետևելով իմաստունին, «այնպէս լինի և ինքն իմաստուն»⁴⁸։

Համալսարանի ուսումնականները զգուշացնում են դաստիարակներին, որ նրանք ուշադիր լինեն իրենց արտահայտությունների մեջ, որովհետև երեխաները շատ արագ են ընկալում ասված ամեն մի խոսք։

⁴⁴ Նույն տեղում, էջ 455։

⁴⁵ «Սահմանադրութիւն դաստիարակութեան» ՄԱՄ, ձեռ. № 9466, ք. 32ա։

⁴⁶ Նույն ձեռագրում, ք. 34ա։

⁴⁷ «Ամառան» հատոր, էջ 453։

⁴⁸ «Զմեռան» հատոր, էջ 195։

Նշվում է, որ փոքրահասակներն ավելի լավ են յուրացնում ուսուցումը, քան մեծահասակները: Նախ՝ փոքր երեխայի զգայարանները մոմի պես փափուկ են՝ «առաւել ընդունի զտիպն»: Երկրորդ՝ նա ազատ է ամեն տեսակի հոգսերից: Երրորդ՝ կամբով հնազանդ է: Չորրորդ՝ բնավորութեամբ ավելի շատ է հակված բարուն, քան մեծահասակը⁴⁹:

Փորձեր են արվել բացատրելու մանկավարժական բնույթի կարևոր այն հարցը, թե ինչու՞ երեխաները միատեսակ ընդունակութուններ չունեն. նրանց մի մասը ուշիմ է և մտացի, իսկ մյուսները՝ քիչ ընդունակ և բթամիտ, որոշ երեխաներ քշխոս են, մյուսները՝ շատախոս: Այս բացատրելու նպատակով դարձյալ շորս պատճառ է առաջ քաշվում. երեխայի շար ու բարի խառնվածքը, ծնողներից ժառանգածը, շրջապատի ազդեցությունը և շար ու բարի դաստիարակությունը⁵⁰:

Մանկավարժական առաջավոր հայացքներ ունեցող Սյունիքի ուսումնականները, դժբախտաբար, կողմնակից են եղել ծեծի: Անհրաժեշտ դեպքում հանձնարարել են դիմել խստութունների և այդ պատճառարանել են հետևյալ կերպ. երեխան փոքր հասակում ամեն բանում դյուրափոփոխ է, ծովի ալիքների նման տատանվում է, «այսր և անդր երթայ», դրա համար անհրաժեշտ է դիմել խստութունների: Անզիջողությունը կարևոր է համարվում դաստիարակության մեջ, սակայն միաժամանակ զգուշացվում է, որ ամեն մի պատիժ ունի իր չափը. դաստիարակությունը սեր է սանի նկատմամբ⁵¹: Պետք է սակայն ասել, հայտնի չէ, որ Սյունյաց համալսարանականները որևէ առիթով դիմած լինեն ծեծի:

А. Г. АБРААМЯН. — **Общественно-политические и педагогические взгляды ученых Сюника.**

Большой интерес представляют социально-политические и педагогические воззрения ученых Гладзорского и Татевского университетов, о чем сохранилось значительное количество высказываний в оставленных ими рукописях. Общество они уподобляют человеческому организму, каждый член которого выполняет свою функцию. Во главе общества стоит монарх, от него требуется, чтобы он имел советников. Наиболее положительное мнение выражено о крестьянстве, без которого общество не может существовать. Одобрительны высказывания о ремесленниках, но весьма отрицательны о торговцах.

В работах, написанных в Гладзорском и Татевском университетах, имеются любопытные сведения о педагогике. Согласно их теории ребенок — «чистый пергамент», воспитатель должен быть в высшей степени подготовленным, обучение вести соответственно возрасту ребенка. Воспитатель должен воспитывать ребенка на высоких нравственных примерах и внушать отвращение к воровству, разбою, лжи, безделию и т. п.

⁴⁹ «Գիրք հարցմանց». էջ 251:

⁵⁰ Նույն տեղում, էջ 251:

⁵¹ «Ամառան» հատոր, էջ 454: